«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՈՐՈՇՈՒՄ N 121-Լ

ք. Երևան 02 մայիսի 2025թ.

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ «ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ» ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի (այսուհետ՝ Ինստիտուտ) կանոնադրության 49-րդ կետի 5-րդ ենթակետի և Ինստիտուտի Գիտական Խորհրդի աշխատակարգի 20-րդ կետի 6-րդ ենթակետի, 77-րդ և 78-րդ կետերի դրույթներով՝ Ինստիտուտի Գիտական Խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հաստատել «Վանաձորի Հ" Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակավորման բարձրացման «Ֆիզիկական դաստիարակության համակարգի զարգացման արդի հիմնախնդիրները» դասընթացի ծրագիրը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի մայիսի 5-ից:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ, ՌԵԿՏՈՐ ՏԻԳՐԱՆ ՍԻՄՈՆՅԱՆ

Հավելված
«ՀՖԿՍՊԻ» հիմնադրամի Գիտական խորհրդի
2025 թվականի մայիսի 2-ի Թիվ 121-Լ որոշման

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հաստատում եմ

Ռեկտոր _____________ Տիգրան Սիմոնյան

«02» մայիսի 2025թ

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ «ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ» ԴԱՍԸՆԹԱՑԻ

ԾՐԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2025թ.

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ «ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ»

ԴԱՍԸՆԹԱՑԻ

ԾՐԱԳԻՐ

Դասավանդող(ներ)ի անուն, ազգանունը	Ֆրունզ Ղազարյան (մ.գ.դ., պրոֆեսոր), Ելենա Հակոբյան (մ.գ.դ., պրոֆեսոր), Արտակ Ստեփանյան (մ.գ.թ., դոցենտ), Յուրա Գրիգորյան (դոցենտ), Եկատերինա Նահապետյան (դոցենտ), Մեսրոպ Բարբարյան (մ.գ.թ.)
Դասընթացի անվանումը	Ֆիզիկական դաստիարակության համակարգի զարգացման արդի հիմնախնդիրները
Դասընթացի տևողությունը	18 ակադեմիական ժամ
Ժամերի բաշխումը	Դասախոսություն՝ 9 ակադեմիական ժամ Գործնական՝ 9 ակադեմիական ժամ
Դասընթացի գնահատումը	0-20 միավոր
Յուրաքանչյուր ուսումնառության արդյունքի և կատարման չափանիշի գնահատման մեթոդները	Ինքնագնահատում, փոխադարձ գնահատում, ձևավորող գնահատում
Ստուգման ձև	Ստուգարք (դրական է գնահատվում 8 և ավելի միավորը)
Անհրաժեշտ նյութա-տեխնիկական ռեսուրսները	Ինտերակտիվ գրատախտակ, ֆլիպչարտ, A4 ձևաթղթեր
Դասընթացի դասավանդման մեթոդներ	Դասախոսություն, քննարկում, բանավեճ, սալիկահանդես, շրջված լսարան
Դասընթացի ուսումնառության մեթոդներ	Գործնական աշխատանք, պրոբլեմային իրավիճակ, մտաբերում, օրինակներով ուսուցում
Դասընթացի նպատակը	Ամրապնդել մասնագիտական և մանկավարժական կարողունակությունները, ապահովել շարունակական մասնագիտական զարգացում
Դասընթացի խնդիրները	• Ընդլայնել մասնագետների գիտելիքները ֆիզիկական դաստիարակության համակարգի զարգացման ժամանակակից ուղղությունների և ապագա մասնագետների մասանգիտական պատրաստության հարցերի վերաբերյալ:

	• Ծանոթացնել ֆիզիկական դաստիարակության օղակներում առարկայի դասավանդման մեթոդաբանության նոր մոտեցումներին: • Ձևավորել ֆիզիկական դաստիարակության գործընթացում անհատական և տարբերակված մոտեցում ցուցաբերելու կարողություն:
Դասընթացի վերջնարդյունքները	**Գիտելիք** Ունկնդիրը կիմանա • Ֆիզիկական դաստիարակության ժամանակակից հիմնախնդիրները և լուծման ուղիները: • Տարբեր շարժողական ընդունակությունների զարգացման օրինաչափությունները: • Անձի համակողմանի և ներդաշնակ զարգացման հիմնախնդիրները: • Ֆիզիկական կուլտուրայի ժամանակակից դասի կազմակերպման և անցկացման մեթոդիկան: • Ֆիզիկական դաստիարակության սպորտայնացման հիմնախնդիրները: • Ընդհանուր տեսական և մասնագիտական գիտելիքների հաղորդման ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաները: **Կարողություն** Ունկնդիրը կկարողանա • Մասնագիտական գործունեությունն իրականացնել ժամանակակից պահանջներին համապատասխան: • Տարբերակել շարժողական ընդունակությունների զարգացման սոցիալական և ժառանգական ծրագրերը: • Առանձնացնել ֆիզիկական կուլտուրայի դասերը՝ ըստ բնորոշ առանձնահատկությունների: • Հիմնավորել սպորտային ուղղվածության ֆիզիկական կուլտուրայի դասերի ընթացքում կիրառվող սկզբունքների, մեթոդների, միջոցների, կազմակերպչական ձևերի ընտրությունը և անցկացնել սպորտայնացված դասեր տարբեր մարզաձևերից: **Հմտություն** Ունկնդիրը կտիրապետի • Ֆիզկուլտուրային կրթության ժամանակակից պահանջներին և իր մասնագիտական գործունեությունը կկառուցի դրանց հիման վրա: • Շարժողական ընդունակությունների մշակման և դրանց մանկավարժական թեստավորման համապատասխան միջոցներին և մեթոդներին:
Դասընթացի բովանդակությունն ըստ թեմաների	**Թեմա 1.** Ժամանակակից ֆիզիկական դաստիրակության տեսությունը որպես ոլորտի մասնագետների պրոֆեսիոնալ պատրաստության հիմք: **Թեմա 2.** Ժամանակակից ֆիզիկական դաստիրակության տեսությունում կիրառվող ելակետային հասկացությունները: **Թեմա 3.** Ֆիզիկական դաստիարակության ժամանակակից համակարգը: **Թեմա 4.** Ֆիզիկական դաստիարակությունը ընտանիքում (ներկա մոտեցումները): **Թեմա 5.** Ֆիզիկական դաստիարակությունը նախադպրոցական ուսումնական հաստատություններում (ըստ նոր չափորոշիչի): **Թեմա 6.** Ֆիզիկական դաստիարակությունը հանրակրթական դպրոցներում (ըստ նոր չափորոշիչի): • Դպրոցականների ֆիզկուլտուրային կրթության ժամանակակից պահանջները:

	• Դպրոցականների անձի ձևավորման հիմնախնդիրները ֆիզիկական դաստիարակության գործընթացում: • Դպրոցականների շարժողական ընդունակությունները և դրանց մշակման մեթոդիկան: • Գնահատման առանձնահատկությունները դպրոցականների ֆիզիկական դաստիարակության գործընթացում: • Դպրոցականների ֆիզիկական դաստիարակության կազմակերպման ձևերը, դասի տեսակները և դրանց բնութագրերը: • Աշակերտների գործունեության կազմակերպման մեթոդները: • Դպրոցականների ֆիզիկական դաստիարակության սպորտայնացումը: • Ֆիզիկական կուլտուրայի դասերի բժշկամանկավարժական հսկողությունը և անվտանգության ապահովումը: • Մանկավարժական թեստավորումը կրտսեր դպրոցում: • Ֆիզկուլտուրային գիտելիքների հաղորդման մեթոդիկան հանրակրթական դպրոցում: **Թեմա 7.** Ֆիզիկական դաստիարակությունը նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում և բուհերում (ըստ նոր ուսումնական պլանների): **Թեմա 8.** Նախազորակոչային և զորակոչային տարիքի դպրոցականների ֆիզիկական պատրաստությունը (արդի վիճակը): **Թեմա 9.** Մեծահասակ բնակչության ֆիզիկական դաստիարակության արդի հիմնախնդիրները:
Գրականություն	1. Ղազարյան Ֆ.Գ., Գրիգորյան Ա.Ա., Ֆիզիկական դաստիարակության տեսություն, Երևան, 2003, 168 էջ: 2. Ղազարյան Ֆ.Գ., Մարդու ֆիզիկական վիճակի մոնիտորինգ, Երևան, 2007, 215 էջ: 3. Ղազարյան Ֆ.Գ., Ստեփանյան Ա.Գ., Ֆիզիկական դաստիարակության տեսություն և մեթոդիկա, Երևան, 2013, 183 էջ: 4. Ստեփանյան Ա.Գ., Կրտսեր դպրոցականների ֆիզիկական դաստիարակությունը, ուսումնական ձեռնարկ, Երևան, 2025, 246 էջ: 5. Խաչատրյան Ա.Ռ. Նախազորակոչային տարիքի դպրոցականների ֆիզիկական դաստիարակության բովանդակությունը կապված ազգային բանակում ծառայելուն պատրաստվելու հետ: Ատենախոսություն, Երևան, 2004, 130 էջ: 6. Հակոբյան Ե.Ս. Մեծահասակ ազգաբնակչության ֆիզիկական դաստիարակության տեսության և մեթոդիկայի հիմունքները, Երևան, 2011, 248 էջ: 7. Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչ, 2021 8. Холодов Ж.К., Кузнецов В.С., Теория и методика физического воспитания и спорта: Учебное пособие для для студентов высших учебных заведений, М.: Издательский центр «Академия», 2008.-6-е изд., 480 с.
Որակի ապահովում և հետադարձ կապ	Հարցում

Կազմեցին՝ մ.գ.թ., դոցենտ՝ Արտակ Ստեփանյանը, մ.գ.դ., պրոֆեսոր՝ Ելենա Հակոբյանը, դոցենտ՝ Յուրա Գրիգորյանը, դոցենտ՝ Եկատերինա Նահապետյանը